

վրայ ունի տեղեկագիրք մը (Commemoratorium de casis Dei) խորագրով, Ս. Յովհաննէս Կարապետի վանքը կը դասակարգէ ա՛յն վանքերուն մէջ, որ Ս. Քաղաքէն երկու փարսախ հեռի կը գտնուին, իր խօսքերն են. «Ս. Յովհ. Կարապետի վանքը, ո՛ւր ան ծնած է, կը գտնուին երկու ֆահաւսներ». — Ս. Թէոդոսի մէջ՝ երկու. — Ս. Սարգիսի մէջ՝ մեկ»:

Գ. Եպիփան անուն ուխտաւոր մը, (ըստ ոմանց, Թ. դարուն, ըստ այլոց, ԺԱ. դարուն կ'ապրէր), Յովհ. Մկրտիչի հայրենիքը ցոյց կու տայ Երուսաղէմի եւ Էմմաւուս-Նիկիոյօլսոյ մէջ, Կարիս լեռան վրայ: «Ս. Քաղաքին մօտ, կը յարէ ան, դէպ արեւմուտք կը գտնուին երկու այրեր, որ կը պարունակեն Հերովդէսէն նահատակուած Բեթղեհէմի Մանկանց Նշխարները: Անկէց գրեթէ վեց մղոն, դէպ արեւմուտք կը գտնուի Կարիս քաղաքը»: Կարիմը ինչպէս տեսանք, Այնքեարիմն է, որ Սաչակրաց ժամանակ, յոյները կը կոչէին Օրիկե, իսկ լատին թագաւորութեան սկզբնական տարիներուն, պետական արձանագրութեանց մէջ կը կոչուէր Montana, և Փրանկ տիրապետութենէն սկսեալ, լատին պետական հողերու մասն կը կազմէր: 1110ին Սեպտ. 28ին, Պաղտին Ա. թագաւորը՝ կը հաստատէ, ի նպաստ Երուսաղէմի Ս. Յովհաննէս հիւանդանոցին, կատարուած նուիրատուութիւն մը, որուն արձանագրութիւնն հետեւալն է. «Կը հաստատեմ նաև իմ նուիրատուութիւնը, որ է երկու գիւղ Պերսափալս և Մոնրաւս, հողեր և տուներ Երուսաղէմի զանազան տեղերու մէջ»: Պերսափալսն՝ այժմու Պերսափափան է, որ Երուսաղէմի հրւ. արեւմտեան կողմը կը գտնուի՝ Այնքեարիմի մօտ: Պաղտին Գ. ևս կը հաստատէ նոյն նուիրատուութիւնը 1154 Յուլիս 30ին:

Դ. Ռուսագրի Դակիդի վանահայր՝ 1113ին կ'այցելէ Այնքեարիմը, Եղիսաբեթը ու անոր զաւակը պահպանող վիկիկն աւանդական պարագան յիշելէ յետոյ, կը յարէ թէ նոյն տեղւոյն վերայ կը գտնուի եկեղեցի մը՝ որուն տակ կար փոքրիկ այր մը, ու անոր դրան կոթնած էր ուրիշ եկեղեցի մը: Զանց կ'ընենք 1130ին, 1150ին, 1170ին, 1185ին, 1187ին այն անանուն ուղեգրութիւններն, որոնք կը հաստատեն Այնքեարիմի վանքին ու եկեղեցւոյն գոյութիւնը:

Ե. 1310ին, Մարկն Սաւուդ կ'այցելէ Այնքեարիմ և իր շի-